վարդապետի ի տարին 600 բուրլի, յարդեանց Մ. Աթոռոյ. 1441։

— Ցանուն Տ. Մեսրոպ վարդապետի, որով կարգեցաւ նա յաւագ անդամ Կոնսիստորիային Շամախւոյ. թ. 1455։

— Ցանուն Տ. Յուսիկ վարդապետի Մովսիսեան, անդամոյ Սինոդի ս. Էջմիածնի, որով կարգեցաւ նա վերահսկող վանուցն ս. Հռիփսիմեայ. թ. 1456։

— Ցանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յանձն արարաւ պատուիրել թեմակ. առաջնորդաց Ռուսաստանի, զի առաքեսցեն առ պ. Մակար Եկմալեանց անձինս ընդունակս երաժշտութեան, առ ի հրահանգել լինել խմբապետ քառաձայն երգեցողութեան ս. պատարագի. թ. 1487։

— Ցանուն կոնսիստ. Արցախայ, որով յայտ արարաւ կարգումն Տ. Մատթէոս վարդապետի յաւագ անդամ նորին. թ. 1492։

— Ցանուն Տ. Մատթէոս վարդապետի ի նոյն միտս. թ. 1495։

— Ցանուն երեցփոխի եկեղեցւոյն Օդեսայի, պ. Սիրականայ Ասատուրեանի, որով կարգեցաւ նա ի դանձապետ ս. Երուսաղէմի. թ. 1897։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

11 Նոյեմբեր.—Սինոդը Տէր Ոսկանեան Մեսրոպ քահանային նշանակեց Բալախանու Հայոց հովիւ, որոշելով նորա համար 100 ծուխ Բաքու քաղաքի մէջ և պատուիրելով, որ բաւականանայ այդչափով և մնայ նոյն քաղաքի ս. Աստուածածին եկեղեցւոյ միայն։

11 Դեկտ.—Նորին Վեհափառութեան Սրբազան կոնդակի համաձայն Արժ. Մխիթար վարդապետին նշանակեց փոխանորդ Աղեքսանդրապոլի վիճակի։

18 Դեկտ.—Արժ. Տիրայր վարդապետին կարգեց քննիչ Ամարասու վանքի թեթենեաց Տառաստանի վարձակալութեան գործի համար և պատուիրեց փութալ քննութեան հետևանքը Սինոդին յայտնելու։

— ⁂ —

ՊԱՏՇԱՌՆԿԱՆ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Ըստ կանոնի բարեյիշատակ Յովսէփայ Ղզմիրեանց՝ տարւոյս Յուլիս 6 թուականի և 18 թուականաց պաշտօնական յայտարարութեամբ հրաւիրուում էին թէև այն հեղինակներն ու բանասէրները՝ որք Ազգային Դպրութեան և Պատմութեան վերաբերեալ ո՛ և է աշխատութեամբ կը փափագին մասնակցել Սահակ—Մեսրոպեան Դրական մրցանակաբաշխութեան, իրենց աշխատասիրութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1899 տարւոյ Յունուարի վերջ, սակայն ըստ նորագոյն անօրինութեան Կանոնի Գործադիր Մնայուն Ցանձնաժողովոյ, յիշեալ պայմանաժամն երկարաձգած է մինչ 1899 փետրուարի վերջ։

Հետևաբար վերստին կը հրաւիրուին հեղինակներն ու Բանասէրները որ հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն ի Կոստանդնուպոլիս մինչ որոշեալ պայմանաժամ։

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ լինին, իսկ ձեռագիրք մէկ օրինակ, որք ետ չեն դարձուիր։



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՔՐԻՍՏՈՍ ԻՄԻՋ ՄԵՐ ՑԱՑՏՆԵՑԱԾ.

Այս աւետարեր ողջոյնով է սկսում Հայաստանեայց ս. Եկեղեցին իւր եկեղեցական տարին, որ գրեթէ նոյնանում է քաղաքական տարւոյ հետ, և մատնացոյց է անում դորանով յայտնութեան այն լոյսը, որ առաջնորդող պէտք է լինի իւր հոգևոր զաւակներին առաջիկայ ամբողջ տարւոյ և ամբողջ կեանքի ասպարիզի վերայ։

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ ... ողջունում ենք միմեանց ամէն անգամ երբ